ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

ՃԱՏՐԱԿԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ ԳԱՐՐԻ ԿԱՍՊԱՐՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐ ԱՋԳԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Կիրակի Յուլիս 13, 2003, յետ միջօրէի ժամը 2:30-ին, աւելի քան 300 անձեր տեղ գրաւած էին Առաջնորդարանի համալիրի Հայկ և Ալիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ՝ վայելելու համար ճատրակի աշխարհի ախոյեան Գարրի Կասպարովի ելոյթը և հանդիպում ունենալու անոր հետ:

Այս ձեռնարկը, որուն կը նախագահէր Ամերիկայի Արևելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, կազմակերպուած էր Ս. Վարդան Մայր Տաճարի Յայտագիրներու Յանձնախումբի երիտասարդ անդամներուն կողմէ՝ ղեկավար ունենալով Ս. Վարդան Տաճարի լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհն. Չեանը:

Ներկայ էին նաև Անգլիոյ հայոց նախկին առաջնորդ Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն և լիազօր դեսպան տիար Արմէն Մարտիրոսեան, Ռուսաստանի Նիւ Եորքի փոխհիւպատոս Վահէ Էնկիպարեան, ՄԱԿ-ի Յայտագիրներու և Վարչական Յանձնախումբի քարտուղար տոքթ. Մովսէս Աբէլեան և Նիւ Եորքի մարզական պատասխանատու Քէնէթ Փոպզիպա:

Այս հանդիպումը կարելի եղաւ իրականացնել շնորհիւ տիար Սեդրակ Ակոնեանի, որը ներկայացուց օրուան հիւրը: Այնուհետև խօսք ըսաւ նշանաւոր շախմատիստը:

Հանդիպումն ամփոփեց Ամերիկայի Արևելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ ըսաւ. «Ես ճատրակ խաղցող մը չեմ, այդ պատճառաւ չեմ կրնար ճատրակի մասին խօսիլ, սակայն կրնամ արտայայտուիլ այսօրուան պատգամին մասին: Կասպարով խօսեցաւ հոգևոր միասնութեան մասին, և անոր արտայայտութիւնները շատ տեղին էին: Անոր խօսքերը ցոյց տուին, թէ ան որքան խելացի է, որովհետև կրցած է ըմբռնել, թէ մենք կրնանք իրարմէ տարբեր ըլլալ, ապրիլ զանազան վայրերու մէջ, խօսիլ տարբեր լեզուներ, սակայն կրնանք միացած ըլլալ հոգիով»:

Ապա, առաջնորդ Սրբազան Հայրը Արևելեան թեմի անունով Գարրի Կասպարովին նուիրեց Վերազարթօնքի մետալը:

Սրբազան Հօր խօսքէն ետք՝ ներկաները օրուան հիւրին ուղղեցին զանազան հարցումներ, որոնց ան պատասխանեց մեծ համբերութեամբ և սիրով:

Երեկոյթի աւարտին՝ ճատրակի բոլոր ժամանակներու աշխարհի ուժեղագոյն վարպետ Գարրի Կասպարով ստորագրեց «*Կասպարովն Աշխարհի Դէմ*» իր գիրքը, որ տեսակ մը օրագրութիւնն է Microsoft Zone համակարգիչին դէմ իր ունեցած պատմական մրցումին:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ